Շնորհավորում ենք մարզի հանրակրթական դպրոցների, մ/մասնագիտական, արհեստագործական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողներին՝ նոր՝ 2016/17 ուսարվա մեկնարկի կապակցությամբ: Ձեզ՝ նորի հետ հանդիպելու հաճելի պահեր եւ հաջողություններ գիտելիքների զարմանահրաշ աշխարհում:

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՇԱԲԱԹ, 27 ՕԳՈՍՏՈՍԻ 2016Թ.
№ 25 (401)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

... ´ ³ Ûó ÑñÏ »½ Ñá · Çë ÙáñÙáùáõÙ ³ Ûë ïáÃ Ð ³ í ³ ïáõÙ ¿ ¹»é ùá ³ é ³ íáïÇÝ£

ì ²Ð²Ü î ºðÚ²Ü

Վահե Հակոբյանը՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ

Վահե Հակոբյանը, ով 2014 թվականի հուլիսի 1-ից «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության վարչական տնօրենն էր, 2016թ. օգոստոսի 15-ից նշանակվել է նույն ընկերության գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ:

Վահե Հակոբյանը ծնվել է 1971թ. Երեւանում: Ավարտել է Երեւանի Ն.Ստեփանյանի անվան N71 միջնակարգ դպրոցը: 1993թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը՝ ինժեներ-կիբեռնետիկ մասնագիտությամբ: 1993-95թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 1996-2000թթ. աշխատել է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում:

2000-ից զբաղվել է ձեռներեցությամբ: 2002-2010թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազությունում՝ ներքին անվտանգության ղեկավար, 2010-ից մինչ 2014 թվականներն աշխատել է խորհրդական Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմում: 2010-2011թթ. աշխատել է նաեւ «Քրոնիմետ մեթալս թրեյդինգ» ՍՊ ընկերությունում՝ խորհրդական, 2011-ից նույն ընկերության կոմերցիոն տնօրենն է:

2014-ի հուլիսի 1-ից «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության վարչական տնօրենն է:

2010թ. ԼՂՀ ՊՆ կողմից պարգեւատրվել է անձնական զենքով:

Անկուսակցական է:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում կատարվել են նաեւ կառուցվածքային որոշ փոփոխություններ: Լուծարվել է վարչական տնօրենի հաստիքը: Ստեղծվել են մի քանի դեպարտամենտներ, որոնք կգլխավորեն վարչական տնօրենի նախկին երեք տեղակալները:

Հիշեցնենք՝ Վահե Հակոբյանը միաժամանակ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիայի նախագահը եւ «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբի նախագահը:

Շնորհավորում ենք Վահե Հակոբյանին՝ նոր նշանակման կապակցությամբ, ցանկանում նրան հաջողություններ Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության խոշորագույն ձեռնարկության աշխատանքի արդյունավետության բարձրացման, ինչպես եւ Սյունիքի մարզի առջեւ ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում:

«Սյունյաց երկիր»

Վարչապետն այցելել է Մեղրու տարածաշրջան

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն աշխատանքային այց է կատարել Մեղրու տարածաշրջան:

Կառավարության ղեկավարը նախ եղել է Սյունիքի տարածաշրջանային մաքսատան «Մեղրի» մաքսային կետում: Պատասխանատուները Հովիկ Աբրահամյանին են ներկայացրել մաքսատան աշխատանքը ու մատուցվող ծառայությունները. զեկուցվել է, որ մաքսատունը գործում է 24-ժամյա ռեժիմով, քաղաքացիների եւ տնտեսվարողների անցումը մաքսակետով կազմակերպվում է առավելագույնը 10-15 րոպեի ընթացքում: Նշվել է, որ Իրանի հետ վիզայի ռեժիմի վերացման շնորհիվ էականորեն ավելացել են ուղեւորափոխադրումները, ինչի կապակցությամբ վարչապետը հանձնարարել է պատասխանատուներին նվազագույնի հասցնել մաքսակետով ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների համար անհրաժեշտ ժամանակահատվածը, սահմանահատումն իրականացնել առավել սահուն եւ արագ, շարունակել բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը:

Այնուհետեւ կառավարության ղեկավարն այցելել է Մեղրու տարածաշրջանի այն հատված, որտեղ առաջիկայում նախատեսվում է հիմնել ազատ տնտեսական գոտի, որի շուրջ ՀՀ վարչապետը պայմանավորվածություն էր ձեռք բերել: Ակնկալվում է, որ նոր ԱՏԳ-ն առավել առարկայական կդարձնի Իրանի հետ առեւտրատնտեսական եւ արդյունաբերական

էջ 2

«Սյունյաց երկիր»-ը բոլորի թերթն է

Թերթի խմբագրակազմի հայտարարությունը

Տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա՝ սեպտեմբերի 18-ի եւ հոկտեմբերի 2-ի ընտրությունների քարոզարշավի ընթացքում, ինչպես նախորդ բոլոր ընտրությունների եւ տեղական ու համապետական քաղաքական միջոցառումների ժամանակ, «Սյունյաց երկիրը» պատրաստ է հավասար հիմունքներով իր էջերը տրամադրել համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի բոլոր թեկնածուներին:

Գովազդային նյութերը կարող է պատրաստել թեկնածուի նախընտրական շտաբը եւ տրամադրել խմբագրությանը:

Խմբագրությունը կարող է գովազդային նյութերի պատրաստումը, ըստ թեկնածուի նախընտրական շտաբի առաջարկած տարբերակի ու ծրագրի, իրականացնել իր ուժերով:

Նախընտրական քարոզչությունը կիրականացվի ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցով սահմանված ժամկետում:

Նախընտրական (քաղաքական) գովազդի հետ կապված հարցերով կարող եք դիմել թերթի խմբագրություն:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Ռ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ

Հավերժացվում է Արցախյան վերջին պատերազմում զոհված սիսիանցիների հիշատակը

Օգոստոսի 20-ին այցելեցինք Սիսիանի քաղաքային պանթեոն՝ Արցախյան գոյամարտի նահատակների շիրիմներին: Կանխավ գիտեինք, որ «Սիսական» ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանի նախաձեռնությամբ այդ օրը պետք է կատարվեին 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված սիսիանցի մարտիկներից ութ հոգու շիրիմների բարեկարգման, տապանաքարերի տեղադրման եւ պանթեոնի ամբողջ տարածքի մաքրման աշխատանքներ: Դեռ տեղ չհասած՝ նկատեցինք, որ այնտեղից վերադառնում են զինվորականների շարքեր՝ բահերով, փոցխերով, աշխատանքային այլ գործիքներով: Նրանք ավարտել էին հանձնարարված գործը եւ վերադառնում էին զորամաս: Արդեն պանթեոնում պարզ դարձավ, որ զինվորների մեծ մասը դեռ աշխատում է: Նրանց հետ էր իրենց հրամանատարը, գնդապետ Սմբատ Գրիգորյանը՝ բանվորական արտահագուստով, 12 տարեկան որդու հետ: Հեռվից զինվորների մեջ նկատելի էին քաղաքացիական հագուստով տղամարդիկ, նաեւ մի քանի կանայք: Նրանք Աշոտ Մինասյանի, նաեւ զոհվածների մարտական ընկերներն էին: Տեսանելի էր, որ «Հրամանատարը» (Աշոտ Մինասյանին այդպես էին պատվում եւ դիմում մարտական ընկերներն ու մյուս ներկաները) խմբից խումբ է անցնում, հանձնարարություններ տալիս: Մենք մոտեցանք նրան: Քիչ անց մեզ միացավ նաեւ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանը: Նախ լսեցինք Աշոտ Մինասյանի պարզաբանումները կատարվող աշխատանքների վերաբերյալ: Իսկ հետո՝ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահի հետ չէինք կարող թաքցնել մեր հիացմունքը՝ Աշոտ Մինասյանի հերթական նախաձեռնության առիթով:

Այդ նախաձեռնության իրականացմանը մասնակցում էր Ավետ Սարգսյանի գլխավորած «Հիդրո» անհատական կոոպերատիվը՝ վերջին նահատակների շիրիմների տարածքը հարթեցնելու համար հող, ավազ տեղափոխելով: Գործի էր դրված Նորիկ Դադաշյանի ՍՊ ընկերության տեխնիկան:

Բարեկարգման աշխատանքներն ավարտելու վրա էին, երբ պանթեոնի մուտքի հուշաղբյուրի մոտ սկսեցին փոքր խմբերով հավաքվել 16-18 տարեկան պատանիներ ու աղջիկներ՝ ձեռքերին ծաղիկներ: Շուտով նրանց շարքերն ավելի ստվարացան, մեր վաղվա զինվորներն էին՝ իրենց քույրերի, ընկերուհիների հետ: Նրանց մեջ առանձնանում էին քաղաք այցելած մի քանի հյուրեր: Եկել էին խոնարհվելու Արցախյան պատերազմի նահատակների շիրիմներին: Իսկ պանթեոնում հանգչում է Արցախյան հերոսամարտի սիսիանցի 56 զինվոր (զոհված 103 հոգուց):

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Վարչապետն այցելել է Մեղրու տարածաշրջան

էջ 1

քաղաքականությունը, կնպաստի երկկողմ տնտեսական կապերի խորացմանն ու ընդլայնմանը, կձեւավորվեն եւ կկազմակերպվեն այնպիսի ծառայություններ, որոնք հնարավորություն կտան առանց խոչընդոտի մուտք գործել Եվրասիական տնտեսական միության եւ իրանական շուկաներ: Հովիկ Աբրահամյանը կարեւորել է Իրանի հետ սահմանագոտում ԱՏԳ-ի հիմնումը, որը թույլ կտա կազմակերպել նոր արտադրություններ, իրականացնել արտահանում, հիմնել վերամշակման նոր ձեռնարկություններ, ստեղծել աշխատատեղեր:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Արծվիկ Մինասյանի խոսքով՝ ՀՀ տնտեսության գերակա ուղղություններին համապատասխան ԱՏԳ-ի ստեղծումը նոր եւ լայն հնարավորություններ կստեղծի Հայաստանի, հատկապես Մեղրու տարածաշրջանի համար, քանի որ այնտեղ կբացվեն նոր աշխատատեղեր, լավագույնս կիրացվի առկա տնտեսական ռեսուրսը: Մինասյանը տեղեկացրել է, որ Իրանի սահմանագոտուն հարակից ազատ տնտեսական գոտու ստեղծման նախագիծը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ուղարկվել է բոլոր շահագրգիռ գերատեսչություններին: *«Ակնկալվում է կարճ ժամանակահատվածում հիմնել այս ազատ տնտեսական գոտին, որի մեջ կան թե արդյունաբերական, թե ենթակառուցվածքային եւ թե ծառայությունների մատուցման բաղադրիչները»,* – ասել է նախարարը:

Վարչապետը եղել է մարզի Ագարակ եւ Մեղրի համայնքներում, հանդիպել տեղի բնակչության հետ, ծանոթացել նրանց հուզող խնդիրներին: Հանդիպման շրջանակում վարչապետին ներկայացվել են համայնքներում իրականացվող ծրագրերի ընթացքը, հրատապ լուծում պահանջող խնդիրները: Կառավարության ղեկավարը խորհրդակցություն է անցկացրել տարածաշրջանի համայնքների ղեկավարների հետ: Վարչապետը տեղեկացրել է, որ այս մարզում կառավարությունը պատրաստվում է իրականացնել խոշոր ենթակառուցվածքային նախագծեր, ինչը միանշանակորեն նպաստելու է համայնքների ու առհասարակ մարզի տնտեսական աշխուժացմանը, նոր ներդրումների ներգրավմանը: *«Մեր երկրում նոր աշխատատեղերի ստեղծումը կառավարության առանցքային հարցերից է, եւ մեր քաղաքականությունն ուղղված է մարզերում նոր աշխատատեղերի ստեղծմանը»,* – նշել է Հովիկ Աբրահամյանը:

gov.am, 17 օգոստոսի 2016

Արարատյան դաշտի գյուղնախարարությունը

Գյուղնախարար Սերգո Կարապետյանը տեղյա՞կ է, որ Սյունիքում թեւածում է դաբաղը, իսկ անասնաբուժական ծառայությունը հրաժարվում է տեղեկատվություն տալ թե՛ իրավիճակի եւ թե՛ ձեռնարկվող միջոցառումների մասին:

Սյունիքի մարզում արդեն մեկ ամիս է, ինչ թեւածում են դաբաղ եւ ծաղիկ հիվանդությունները: Դրա հետեւանքով շատ ծանր իրավիճակ է ստեղծվել մարզի անասնապահության ոլորտում: Բանը նրան է հասել, որ որոշ գյուղերի անասնապահներ արդեն իսկ անասուններն իջեցնում են ամառային յայլաղներից, ինչը ոչ սովորական, ավելի ճիշտ՝ արտառոց երեւույթ է:

Եվ ինչ… Մեկ շաբաթ է՝ փորձում ենք մարզի համապատասխան պաշտոնյաներից ու մասնագետներից հանգամանալից եւ հիմնավոր տեղեկություններ ստանալ այդ ամենի մասին, քանի որ իրավիճակի լարվածությունն ու անորոշությունը մտահոգում են անասնապահությամբ զբաղվող գյուղացիներին: Սակայն… Մարզի անասնաբուժական ծառայության պատասխանատուները ծպտուն չեն հանում եւ, փաստորեն, թաքցնում են հիվանդության մասշտաբը, դրա հնարավոր հետեւանքները եւ, իհարկե, ծառայության կողմից իրականացվող միջոցառումները (եթե իրականացվում են միջոցառումներ):

Երկար բանակցությունից հետո մարզի անասնաբուժական ծառայության ղեկավար Կամո Սարգսյանը մեզ խոստացավ հարցազրույց տալ: Եվ օգոստոսի 22-ին լրագրող Ալվարդ Մեսրոպյանը պետք է հանդիպեր նրան՝ խնդրո առարկայի շուրջ զրուցելու համար: Սակայն Կամո Սարգսյանը վերջին պահին հրաժարվեց զրուցելուց՝ պատճառաբանելով, որ նախարարությունն արգելել է տեղեկություններ տալ լրատվամիջոցներին՝ դաբաղ եւ ծաղիկ հիվանդությունների՝ Սյունիքում տարածվածության մասին:

Լավ, Կամո Սարգսյանը թող կատարի նախարարության հրահանգը, մենք նրան այլեւս չենք անհանգստացնի:

Լավ, եկեք միասին թաքցնենք ստեղծված իրավիճակը՝ հանուն նախարարության աշխատակիցների անվրդովության:

Բայց ի՞նչ է լինելու դաբաղի հետ, ո՞վ է պատասխան տալու վարակված անասունների, ակնկալված եւ չստացված շահույթի, ստեղծված դժվարությունների համար:

Ի դեպ, դաբաղն այն հիվանդություններից է, որի դեմ պայքարն իրականացվում է (պետք է իրականացվի) պետական պատվերով:

Իշխանասարի փեշերին հանգրվանած անասնապահները, մինչդեռ, դժգոհում էին, թե մինչեւ հիմա անասնաբույժները չգիտեն նույնիսկ, թե դաբաղի որ տարատեսակով է անասունը վարակված. արդյո՞ք ծաղիկ հիվանդությունն իսկապես ծաղիկ հիվանդությունն է, թե՞…

Հիմա հարց Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանին:

> *Պարո՛ն նախարար, գոնե տեղյա՞կ եք, թե ինչ է կատարվում Սյունիքի մարզում, գիտե՞ք, որ Ձեր ենթակաները հրաժարվում են հավաստի տեղեկություններ տրամադրել լրագրողներին՝ վկայակոչելով Ձեր գլխավորած նախարարության կողմից սահմանված արգելանքը:*

Մինչ այդ դաբաղը նոր տարածքներ է նվաճում մարզում: Իսկ գյուղնախարարը «Հայլուր»-ի եթերով դոշ է տալիս միայն ու միայն Արարատյան դաշտի չիրացված ծիրանի, լոլիկի ու խաղողի մթերումների համար, այն էլ՝ ոչ միշտ հօգուտ գյուղացու:

Եվ մարզի բազմաթիվ գյուղացիներ՝ քաղաքականությունից կիլոմետրերով հեռու, հարցնում են՝ այդ նախարարը միայն Արարատյա՞ն դաշտի գյուղնախարարն է, թե՞ Սյունիքի հետ էլ կապ ունի…

Եվ վերջին հարցը պարոն նախարարին՝ Հայաստանի Հանրապետությունում ունի՞ց կարող ենք ստանալ հավաստի տեղեկություններ Սյունիքի մարզի խոշոր եւ մանր եղջերավոր անասունների շրջանում դաբաղ ու ծաղիկ հիվանդությունների տարածվածության, ինչպես եւ այն մասին, թե ինչ աշխատանքներ են կատարվում նշված հիվանդությունների առաջն առնելու, գյուղացիներին պատճառված վնասը փոխհատուցելու համար (ինչպես փոխհատուցվում է, ասենք, ծիրանի կարկտահարված բերքի համար):

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ð³ñó³ ½ñáõÛó

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ. «Մեզ համար ավելի մեծ արժեք, քան ընտրողների կամքն է, չկա եւ չի կարող լինել»

«Սյունյաց երկիր» թերթի հարցին պատասխանում է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ Վահե Հակոբյանը

2016թ. սեպտեմբերի 18-ին եւ հոկտեմբերի 2-ին տեղի ունենալիք ՏԻՄ ընտրությունները եւ դրանց շուրջ զարգացումները շարունակում են մնալ սյունիքյան հանրության ուշադրության կենտրոնում:

Ընտրողներին հետաքրքրող հարցերից մեկն էլ, ինչպես եւ ակնկալվում էր, մարզի խոշորագույն տնտեսվարող սուբյեկտի՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ղեկավարության վերաբերմունքն է առաջիկա ընտրություններին եւ հատկապես համայնքների ղեկավարների առաջադրված թեկնածուներին:

Շրջանառվող իրարամերժ կարծիքների տիրույթից դուրս գալու, ինչպես եւ ընկերության դիրքորոշումը հստակեցնելու համար զրուցեցինք «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ Վահե Հակոբյանի հետ:

- Պարոն Հակոբյան, մի քանի օր հետո՝ սեպտեմբերի 18-ին եւ հոկտեմբերի 2-ին, մարզի մի շարք համայնքներում կանցկացվեն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Անկասկած, դա պետական եւ քաղաքական կարեւոր նշանակության իրադարձություն է, ինչի համար էլ այս օրերին տեղի են ունենում ուժերի դասավորում, վերադասավորում... Եվ, բնականաբար, տարբեր ուժերի կամ թեկնածուների կողմից շահարկվում է նաեւ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության դիրքորոշումը: Նախընտրական նման զարգացումները, անշուշտ, սպասված էին, քանզի տեղական ինքնակառավարման մարմինների նախորդ ընտրությունների ժամանակ Զանգեզուրի պղնձամոլիբդենայինը սատարել է այս կամ այն թեկնածուին՝ դրանով իսկ կանխորոշելով ընտրությունների ելքը՝ արժեզրկելով ընտրողների ազատ կամարտահայտության նշանակությունն ու հանրության կարծիքը:

ԼՈՒՍԱՆՆԱ Գ. ՀԱՄԿՈՅԱՆ

Ելնելով վերը շարադրվածից, ինչպես եւ հնարավոր շահարկումներն ու թյուրիմացությունները բացառելու նպատակով կուզենայինք հստակեցնել Ձեր դիրքորոշումն առաջիկա ընտրությունների վերաբերյալ:

- «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը մարզի համայնքներում, այդ թվում՝ Կապան մարզկենտրոնում, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի որեւէ կոնկրետ թեկնածուի չի աջակցում՝ նկատի ունենալով նաեւ, որ ընտրական գործընթացներին միջամտելն ու առնչակից լինելն իր գործառույթների մեջ չեն մտնում:

Ընկերությունը, բնականաբար, կողմնակից է բացառապես գործող օրենսդրությանը համահունչ գործելակերպին, թեկնածուների միջեւ՝ հավասար պայմաններով ընտրապայքարին, ազատ եւ արդար ընտրություններին:

Մեզ համար ավելի մեծ արժեք, քան ընտրողների կամքն է, չկա եւ չի կարող լինել:

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը, որպես մարզի խոշորագույն տնտեսվարող, աներկբա կերպով, շահագրգռված է մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում: Եվ իր գլխավոր առաքելություններից մեկը հենց դա է համարում: Այդ ճանապարհին համագործակցում եւ համագործակցելու ենք համայնքների ընտրյալ ղեկավարների հետ:

Մի խոսքով՝ ժողովրդի ընտրյալը մեր ընտրյալն է:

Այդ հավատամքով ու սկզբունքով էլ առաջնորդվում ենք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման ու անցկացման՝ պետական կառեւորության ներկայիս միջոցառման ընթացքում:

Բարի ընտրություններ բոլորիս:

Զրույցը՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ՏԻՄ ընտրություններ Սյունիքում. ընտրապայքար, այնուամենայնիվ, սպասվում է

Սյունիքի մարզում թիվ 1 քաղաքական իրադարձությունը շարունակում է մնալ սեպտեմբերի 18-ին եւ հոկտեմբերի 2-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունների նախապատրաստությունը:

Սեպտեմբերի 18-ին, ինչպես ասվել է քանիցս, ՏԻՄ ընտրություններ տեղի կունենան Մեղրի, Քաջարան (քաղաքային), Գորիս, Տեղ, Գորայք համայնքներում:

Օգոստոսի 19-ին ավարտվել է համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի թեկնածուների առաջադրումը:

Մինչեւ օգոստոսի 24-ը տեղի կունենա թեկնածուների գրանցումը եւ վերջնականապես պարզ կդառնա, թե ովքեր են հավակնում ընդգրկվել տեղական ինքնակառավարման մարմիններում:

Մինչ այդ, սակայն, կարող ենք որոշակիորեն ասել, որ համայնքի ղեկավարի թեկնածուների շարքում անվիճելի է Մխիթար Զաքարյանի (Մեղրու համայնք), Վաչագան Ադունցի (Գորիս համայնք), Մանվել Փարամազյանի (Քաջարան քաղաքային համայնք) հաղթանակը:

Տեղ համայնքի ղեկավարի թեկնածու է առաջադրվել Ներսես Շադունցը, ով նույնպես մրցակից չունի:

Գորայք նորաստեղծ համայնքի ղեկավարի աթոռի համար կպայքարեն Գորայքի գործող գյուղապետ Առուստամ Առուստամյանը եւ Սառնակունքի գործող գյուղապետ Մանուչար Մկրտչյանը:

Գորիս համայնքում ավագանու անդամի թեկնածու է առաջադրվել 26 հոգի (15 տեղի համար):

Մեղրի համայնքում ավագանու անդամի թեկնածու է առաջադրվել 14 հոգի (11 տեղի համար):

Քաջարան քաղաքային համայնքում ավագանու անդամի թեկնածու է առաջադրվել 16 հոգի (11 տեղի համար):

Գորայք համայնքում ավագանու անդամի թեկնածու է առաջադրվել 9 հոգի (7 տեղի համար):

Տեղ համայնքում ավագանու անդամի թեկնածու է առաջադրվել 15 հոգի (11 տեղի համար):

Բերված փաստերը վկայում են, որ ավագանու անդամի համար ընտրապայքարն առավել սուր կլինի Գորիս համայնքում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀՈՎԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. «Ոսկե մեդալակիրների թվով հանրապետությունում Սյունիքի մարզն առաջատար է»

2016-17 ուստարվա նախօրեին անցած ուստարին ամփոփել է մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը:

– Պարո՛ն Ալեքսանյան, ներկայացրեք, խնդրեմ, նախորդ ուստարվա ձեռքբերումները թվային ընդհանուր պատկերով:

– 2015-16 ուստարում մարզում եղել է 1325 շրջանավարտ, որից 775 հոգի մասնակցել է միասնական քննություններին եւ ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն: Մարզի՝ ոսկե մեդալի 34 թեկնածուից 32 հոգի ստացել է այն (նախորդ ուստարում՝ 21 հոգի)՝ հանրապետությունում դառնալով առաջատար. 14 հոգի ոսկե մեդալի արժանացավ Սիսիանի ավագ դպրոցից, 12 հոգի՝ Գորիսի ավագ դպրոցներից, 1 հոգի՝ Ագարակի միջնակարգ դպրոցից, 1 հոգի՝ Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցից, 3 հոգի՝ Խնձորեսկի միջնակարգ դպրոցից, 1 հոգի՝ Ակների միջնակարգ դպրոցից: Մարզի աշակերտները հաջողությամբ են հանդես եկել նաեւ առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլում. 46 մրցանակակիր ունեցանք, որից՝ 26 դիպլոմ: Դիպլոմակիր են դարձել նաեւ Սառնակունքի (երկու դիպլոմ), Խնձորեսկի (մեկ դիպլոմ), Աճանանի, Գորայքի եւ Անգեղակոթի միջնակարգ դպրոցներից (մեկական գովասանագիր): Ուրախալի է, որ վեց աշակերտ հանրապետական օլիմպիադայում տարբեր առարկաներից գրավեց առաջին մրցանակային տեղ: Երկար ընդմիջումից հետո մաթեմատիկայից Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի աշակերտը գրավեց երկրորդ մրցանակային տեղ՝ մրցելով Երեւանի ֆիզմաթ դպրոցի աշակերտների հետ: Սա նույնպես ձեռքբերում է, նաեւ ուսուցչական լավագույն աշխատանքի արդյունքը: Մրցանակների թվով առաջատար էր Կապանի թիվ 2 ավագ դպրոցը: Նշեմ, որ, ճիշտ է, հանրապետությունում ընդհանուր առմամբ նվազել է բուհ ընդունվողների թիվը, բայց այս տարի մեր մարզում 100 հոգով աճել է այդ ցուցանիշը: Մեծացել է տեղի բուհերի նկատմամբ հետաքրքրությունը: Նախնական տվյալներով առաջին դասարան ընդունվողների թիվը 1622 է՝ անցյալ ուստարվա 1632-ի դիմաց: Ընդհանուր առմամբ, մեր ենթակայության դպրոցներում նախորդ ուստարում 14428 աշակերտ էր, իսկ մարզում՝ 16431, այս ուստարում, նախնական տվյալներով, տարբերությունն այդքան էլ մեծ չի լինի:

– Փաստորեն, տվյալներից կարող ենք արձանագրել, որ Կապանի ավագ դպրոցներից ոսկե մեդալակիրներ չկան: Ինչո՞ւ:

– Կապանում, կարծես թե, քիչ չէ գերազանցության մեդալին կարեւորություն չտվողների թիվը: Բացի դրանից՝ ավագ դպրոցներում պատճառաբանում են նաեւ, որ հիմնական դպրոցներից գերազանցության վկայականով չեն գալիս: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ դպրոցների միջեւ համագործակցության խնդիր կա: Կապանում, կարծես, հիմնական, միջնակարգ եւ ավագ դպրոցների միջեւ կապն ամուր չէ, բայց բարձր արդյունքներ գրանցելու ներուժ կա: Զարմանալիորեն Մեղրու դպրոցներում նույնպես առանձնակի բարձր արդյունքներ չեն արձանագրվում:

– Վերոնշյալ փաստերից մարզում բուհ ընդունվողների թվի ավելացումը, իհարկե, ոգեւորիչ է, բայց փորձը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթությամբ շատ երիտասարդներ անգործ են մնում կամ էլ ստիպված կատարում են ոչ մասնագիտական աշխատանք:

– Ցավալի է, բայց փաստ, որ այսօր բարձրագույն կրթությամբ երիտասարդների մեծ մասն աշխատանքի խնդիր ունի: Սա, նախեւառաջ, պայմանավորված է մեր երկրի սոցիալ-տնտեսական վիճակով: Մյուս կողմից էլ, եթե, ասենք, մեծ թվով տնտեսագետներ, օտար լեզվի մասնագետներ, իրավաբաններ ունենք, փոխարենը լավ արհեստավորներ չունենք: Ուստի եւս մեկ անգամ շեշտեմ այն փաստը, որ մասնագիտություն ընտրելիս նախեւառաջ հաշվի առնեն երկրի տնտեսության պահանջարկը: Բնավ պարտադիր չէ, որ բոլորը բուհ ընդունվեն եւ հետո անգործ մնան, կարող են նաեւ միջին մասնագիտական հաստատություններում ստանալ անհրաժեշտ մասնագիտություն, որի պահան-

էջ 6

Ճանաչված գյուղապնպտեսը՝

գյուղացու հոգսերի եւ, իհարկե, մեղվաբուծության մասին

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻ

Երբ ասում ենք, որ այսինչը հազար թելերով, արմատներով կապված է իր հողին-ջրին, մի տեսակ ծեծված, ծամծմված միտք է թվում, ուղղակի պատկերավոր արտահայտություն: Բայց եթե լինեք Հարժիսում եւ հյուրընկալվեք Մխիթար Հայրապետյանի օջախում, կհամոզվեք, որ ասվածը հենց նրան ու նրա նմաններին է վերաբերում:

Առաջին անգամ չէ, որ լինում եմ նրա տանը, եւ ոչինչ զարմանալի չէ ինձ համար, ինչը զարմացնում, նաեւ հիացնում է ընկերներիս: Այդ հաճելի պահը ես ապրել եմ 20-25 տարի առաջ, երբ առաջին անգամ բացեցի նրանց դուռը: Վաղուց, շատ վաղուց հայտնի է, որ տարածաշրջանի ամենաջրապակաս գյուղը Հարժիսն է: Սերնդից սերունդ է անցնում զրույցն այն մասին, թե երբ օտարականը Հարժիսով անցնելիս խմելու ջուր է խնդրել, նրանից ներողություն են խնդրել եւ ջրի փոխարեն առաջարկել կաթ կամ թան: Այսօր էլ շատ բան չի փոխվել: Բայց դա չի խանգարել, որպեսզի Մխիթար Հայրապետյանն արտաքինով գյուղի մնացած տներից չտարբերվող իր առանձնատանը ստեղծի քաղաքի լավագույն բնակարանների կոմունալ-կենցաղային պայմաններին չզիջող տուն՝ սանհագույցով, տաք ջրով եւ այլ հարմարություններով: Ինչպես ասում են՝ ով ցանկանում, նա էլ ստեղծում է: Ահա սա էր զարմացրել ուղեկիցներիս: Իսկ դա Մխիթարը երեկ չի ստեղծել, այլ հեռավոր 1993 թվականին, երբ նոր էր ամուսնացել իր սիրելի կնոջ՝ Ջուլիետայի հետ, ով այսօր չորս զավակի մայր, բազում թոռների տատիկ լինելուց զատ նաեւ ամեն ինչում ամուսնու թեւ ու թիկունքն է, նաեւ աշխատանքային ընկերը:

Մասնագիտությամբ գյուղատնտես է Մինասյանը: 1973-ին՝ ինստիտուտն ավարտելուց հետո, վերադարձել է գյուղ եւ այլեւս գյուղից դուրս չի եկել, նպատակ էլ չունի: Նույնը խորհուրդ է տալիս նաեւ համագյուղացիներին, հատկապես երիտասարդներին, հնարավորության սահմաններում օգնում, աջակից լինում նրանց:

> *Մեր հանդիպման նպատակն է որպես մասնագետի իմանալու նրա կարծիքը տարածաշրջանում գյուղատնտեսության, մասնավորապես մեղվաբուծության զարգացման հեռանկարների մասին, իմանալով, որ այն դարձել է նրա հիմնական զբաղմունքը:*

Ցավ է ապրում եւ ցավով արձանագրում, որ իր իմացած գյուղատնտեսությունը եւ պաշտոնական փաստաթղթերում արտացոլվող գյուղատնտեսությունը երկու տարբեր բաներ են: Հարժիսը վարելահողերի մակերեսով տարածաշրջանի ամենամեծ համայնքներից մեկն է: – **Դրանց մակերեսը հասնում է 1100 հա-ի,** – բարձրաձայն մտածում է նա եւ շարունակում: **– Մեզ մոտ ոչ մի քառակուսի մետր հող անմշակ չի մնում: Դա լավ է, բայց գյուղացին հնարավորություն չունի հողին տալու անհրաժեշտը, որպեսզի նրանից էլ ստանա ցանկալին: Ու տարին-տարուն բերքատվությունն ընկնում է: Մեզ մոտ բերքատվությունն ընկնում է, իսկ պաշտոնական վիճակագրական տվյալներով՝ բարձրանում: 20 տարուց ավելի տնտեսության գլխավոր գյուղատնտեսն եմ եղել, հողին տվել ենք այն, ինչ պահանջվում է, բայց միայն մի տարի ենք հեկտարից 24,5 ց բերք ստացել: Դա շրջանի ամենաբարձր ցուցանիշն էր: Բանից պարզվում է, որ հողը պարարտացնելը, ցանքաշրջանառություն կիրառելն այնքան էլ ճիշտ չէ, –** խոսքին հումոր է խառնում զրուցակիցս, – **դրա համար էլ հացահատիկի բերքատվությունը թղթի վրա այսօր հասել է 29 ցենտների: Բերքատվության հետ «մեծանում» է նաեւ մշակվող վարելահողերի մակերեսը,** - նույն տոնով շարունակում է նա:

Ակամայից հիշում եմ մի օտարականի միտքն այն մասին, որ Հայաստանի տարածքը կկրկնապատկվի, եթե այն արդուկեն: Երեւի մեր սարերն ու ձորերն արդուկել են ու դրա հաշվին մեծացրել վարելահողերի մակերեսը: Նրա ասածին իմ կողմից ավելացնում եմ, որ տարածաշրջանում համայնքներ կան, որտեղ տասը տարուց ավելի վարելահողերի զգալի մասը չի մշակվում՝ ոչ եկամտաբեր լինելու պատճառով:

> *Եթե մարզի գյուղատնտեսության ղեկավարներն այդ հողատեսքերի տեղը չգիտեն, ես կօգնեմ նրանց:*

Տարիներ առաջ Խոզնավարի համայնքում հացահատիկային մշակաբույսերը զբաղեցրել են 250 հա մակերես, այսօր՝ այստեղ ցանքս է կատարվում 80 հա-ի, Վաղատուրում՝ 420-ից եւ ոչ մի հա-ի, Խանածախում 1000 հա-ից 150 հա-ի վրա: Գյուղը, մասնավորապես գյուղատնտեսությունը պետական հոգածության կարիք ունեն, սակայն բանը խոսքից այն կողմ չի անցնում: Բոլորիս աչքի առաջ գներն աջ ու ձախ աճում են, բացի գյուղացու աշխատանքի արդյունքից: Ինչքան հիշում եմ, գյուղացուց գյուղատնտեսական հիմնական մթերքի՝ հացահատիկի գնման գինը տասնյակ տարիներ շարունակ տատանվում է 80-120 դրամի միջակայքում, բայց այդ ընթացքում հացամթերքների, մասնավորապես թխված հացի գինը մի քանի անգամ բարձրացել է:

Զրույցը տեղափոխում ենք մեզ հետաքրքրող հիմնական հարցի՝ մեղվապահության շուրջ: Խորհրդային տարիներին Հարժիսի պետական տնտեսությունն ուներ մեղվապահական վեց օղակ՝ 1200 փեթակով: Հարժիսի մեղրի համբավը տարածված էր ամբողջ հանրապետությունում: Այսօր էլ այստեղ հաճույքով են զբաղվում մեղվապահությամբ: 10 ընտանիքից 9-ի բակում կամ այգում մեղվափեթակներ կարելի է տեսնել: Զբաղվում են բոլորը, բայց միայն 3 հոգի են հաճելին համատեղել օգտակարի հետ: Նրանցից յուրաքանչյուրն ունի 120-150 մեղվաընտանիք: Նրանցից մեկն էլ մեր հյուրընկալ տանտերն է: Այո, շատերն են զբաղվում, բայց միայն Մխիթար Հայրապետյանն է, ինչպես ասում են, այդ բանն անում «գիտությամբ»: Գյուղինստիտուտում ուսանելու տարիներին առանձնահատուկ հաճույքով էր հաճախում պրոֆեսոր Կոթողյանի դասախոսություններին, իսկ վերջինիս արտահայտած այն միտքը, որ Հայաստանի լավագույն մեղրը Որոտանի կիրճի մեղրն է՝ հպար-

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՄԻՐԶՈՅԱՆԻ

տությամբ էր լցնում նրա հոգին: Խորհրդային տարիներին էլ մի քանի փեթակ ունեին, բայց տնտեսության գլխավոր գյուղատնտեսի պաշտոնը դրանով լրջորեն զբաղվելու ժամանակ չէր թողնում: Զբաղվում էր՝ ինչպես բոլորը: Հետո ամեն ինչ փոխվեց: Հետխորհրդային տարիներին համարյա ամեն ինչով զբաղվում էր: Մեղվապահության հետ կով էր պահում, դրանց գլխաքանակը նույնիսկ հասցրեց 10-ի, ոչխարներ ուներ, հասկանալի է, նաեւ վար ու ցանքս է կատարում: Մի խոսքով շատ բանով էր զբաղվում, բայց ինչպես ընդունված է ասել՝ խախալի գլուխը բան չէր ընկնում: Հիմա ուրիշ է: Մեղուն հիմնական զբաղմունքն է: Փեթակների թիվը հասցրել է 150-ի: Կինը՝ Զուլիետան, ով արդեն փորձառու մեղվապահ է դարձել, շատ է օգնում, թե չէ միայնակ ոչ թե դժվար, այլ անհնար կլիներ այդքանի խնամքը: Տնտեսությունը երկու մասի է բաժանել: Մոտ 100 ընտանիք դաշտ է տեղափոխել՝ մոտեցրել բերքին:

Մեր այցելության պահին տան կողքին տեղավորված փեթակների շարքերում էր՝ տիկնոջ հետ զբաղված էր մի ընտանիքի վրա այլ մեղուների հարձակումը կանխելու գործով: Բացատրեց՝ թույլ ընտանիք է, օրեր առաջ մայրը սատկել է: Նոր մայրն էլ դեռ չի ծնվել: Մի խոսքով «անտեր» է: Զգացել են, դրա համար էլ վրա են տալիս, թալան էր սկսվում: Հարցնում ենք՝ կանխեցի՞ք: Առայժմ այո, հետո կտեսնենք: Ոտքի վրա մեզ համար փոքրիկ դասախոսություն է կարդում. մեղուն հասարակության միջատ է կոչվում: Մեղվափեթակում շատ բան այնպես է, ինչպես մարդկային հասարակության մեջ, միայն թե ավելի կատարյալ եւ ավելի ազնիվ ձեւով: Հասարակությունը շատ բան ունի ընդօրինակելու այս միջատից: Ինչպես ասում են՝ խոսքը խոսք է բերում: Հարցնում ենք՝ իրեն կայացած ֆերմեր համարո՞ւմ է, թե՞ ոչ: Խուսափում է ուղիղ պատասխանից: Ինքը, իր նմանները պետության տեղը գիտեն, իսկ պետությունը, իշխանությունն իրենց տեղը՝ ոչ: Ուշադրության, օգնության կարիք են զգում՝ չկա: Խորհրդային տարիներին, երբ դժվարություններ կային շաքարավազի ձեռքբերման գործում, իսկ ավելի ճիշտ, երբ խանութներում իսպառ բացակայում էր այն, մեղվապահներն իրենց մեղուների քանակին համազոր շաքարավազ էին ստանում: Ակնարկում ենք տիկին Ռոզա Ծառուկյանի ղեկավարած կազմակերպության մասին: Չի՞ օգնում: Մի քիչ հեգնախառն՝ օգնում է, դժվարությունների մեջ հայտնված մեղվապահներից խառն՝ օգնում է, դժվարությունների մեջ հայտնված մեղվապահներից մեղրի կիլոգրամը շուկայականից կրկնակի անգամ էժան գնելով: Պարզվում է, որ գյուղացու արտադրած շատ մթերքների նման մեղրի իրացումն էլ լուրջ հիմնախնդիր է: Այն շուկայում չես վաճառի, ուղղակի չեն գնում: Մեր քաղաքացին մինչեւ մեղվապահին անձամբ չի ճանաչում՝ նրա մեղրը չի գնում: Իսկ եթե մեղրն արտահանե՞ք: Մխիթարը մեզ պարզաբանում է, մենք էլ այն դարձնում ենք ընթերցողի սեփականությունը՝ մեղրն այն եզակի մթերքն է, որի հայաստանյան շուկայում գոյություն ունեցող միջին գինը զգալիորեն գերազանցում է այդ մթերքի՝ միջազգային շուկայում գոյություն ունեցող գնին: Այս տարածքի մեղրն էլ հռչակված է իր որակով այն պատճառով, որ տարածքի բուսածածկույթը բազմազան է, հարուստ իր տեսակներով: Պակաս դերակատարում չունի էկոլոգիական մաքրությունը: Արդյունաբերական կենտրոններից հեռու գտնվելու հանգամանքը մեծապես օգնում է շրջակա միջավայրի մաքրության մակարդակի պահպանմանը: Առանց մեկնաբանությունների՝ Հարժիս գյուղի տարածքում այսօր կա մեղվապահական 18 կետ, յուրաքանչյուրում՝ 50-100 մեղվաընտանիք:

Ժողովրդի մեջ ամուր նստած է այն միտքը, թե մեղվապահները տվյալ տարվա բերքի մասին հարցնելիս պատասխանում են՝ անցյալ տարվա բերքն ուրիշ էր: Մխիթարը ժպտում է՝ այս տարի բերքն առատ է: Հրավիրում է մեզ՝ համտեսելու քամված մեղրի սերուցքը…

20 տարի անց ունեցանք օլիմպիական նոր չեմպիոն

Օգոստոսի 21-ին Ռիո դե Ժանեյրոյում ավարտվեց վերջին չորս տարվա ամենակարեւոր մարզական ստուգատեսը՝ 31-րդ օլիմպիական խաղերը: Հանրահայտ «Մարականա» մարզադաշտում հանգավ օլիմպիական կրակը, որ վառվել էր խաղերի հանդիսավոր բացման օրը՝ օգոստոսի 5-ին: Այս օլիմպիական խաղերը հաջողակ էին հայաստանցի օլիմպիականների համար, որոնք նվաճեցին մեկ ոսկե, երեք արծաթե մեդալ: Հայաստանին առաջին մեդալը պարգեւեց ծանրորդ, 19-ամյա Սիմոն Մարտիրոսյանը, ով կանգնեց պատվո պատվանդանի երկրորդ աստիճանին: Մինչ այժմ Հայաստանը չէր ունեցել օլիպիադայի 19 տարեկան մեդալակիր:

Օգոստոսի 16-ն ամուր մտավ Հայաստանի մարզական տարեգրության մեջ: Հունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը դարձավ անկախ Հայաստանի պատմության երկրորդ օլիմպիական չեմպիոնը: Առաջինն ունեցել էինք քսան տարի առաջ՝ նույնպես հունահռոմեական ոճի ըմբիշ Արմեն Նազարյան: 98կգ քաշային Ա.Ալեքսանյանը, եզրափակչում հաղթելով կուբացի ըմբիշին, նվաճեց ոսկե մեդալ, որը ստանալու համար մարզադահլիճ մտավ ապրիլյան պատերազմի զոհերից մեկի՝ Արցախի հերոս Ռոբերտ Աբաջյանի նկարով շապիկով: Արթուրն այդպես էլ հայտարարեց, որ հաղթանակը նվիրում է սահմանին կանգնած զինվորին եւ զոհված տղաներին: Անվանի ըմբիշը կրում էր աշխարհի կրկնակի, Եվրոպայի եռակի չեմպիոնի կոչումները: Միակ տիտղոսը, որ պակասում էր նրա մեդալների հավաքածուից, օլիմպիական խաղերի ոսկե մեդալն էր, որ ունեցավ: Չորս տարի առաջ վնասվածքով հանդես եկած Արթուրը Լոնդոնում կայացած օլիմպիական խաղերում նվաճել էր բրոնզե մեդալ:

Հայաստանի հավաքականի համար արծաթե մեդալ նվաճեց հունահռոմեական ոճի ըմբիշ Միհրան Հարությունյանը, ով մրցավարների կողմնակալության հետեւանքով չդարձավ օլիմպիական չեմպիոն: *«Ես չեմ պարտվել, կյանքում առաջին անգամ չեմ ամաչում դա ասել, ինձ ուղղակի թույլ չտվեցին ամենաբարձր տեղը զբաղեցնել պատվո հարթակին»,* – լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է օլիմպիադայի փոխչեմպիոնը: Ընդ որում՝ քառորդ եզրափակչում ուժեղ էր գտնվել աշխարհի 2013թ. չեմպիոն, հարավկորեացի ըմբիշի հետ մրցամարտում, իսկ կիսաեզրափակչում Միհրանը պայքարից դուրս էր թողել ադրբեջանցի Ռասուլ Չունաեւին:

Հայաստանի պատվիրակության մեդալների հավաքածուն չորրորդ պարգեւով հարստացրեց գերծանր քաշային ծանրորդ Գոռ Մինասյանը, ով երկամարտի 451կգ արդյունքով արժանացավ արծաթե մեդալի:

Բրոնզե մեդալ նվաճելուն մոտ էին Ռուբեն Ալեքսանյանը (ծանրամարտ) եւ ըմբիշ Լեւան Բերիանիձեն, ովքեր, սակայն, բավարարվեցին չորրորդ տեղով: Մեդալների սպասելիքներ կային մարմնամարզիկ Հարություն Մերդինյանից (նժույգաթափեր մրցաձեւում), ըմբիշ Արսեն Զուլֆալակյանից (նախորդ՝ լոնդոնյան օլիմպիադայում արծաթե մեդալ էր նվաճել), Եվրոպայի չեմպիոն, ծանրամարտիկ Անդրանիկ Կարապետյանից (պոկում վարժությունում ծանրաձողը բարձրացնելիս ծանր վնասվածք ստացավ): Բայց օլիմպիական խաղերը միշտ էլ անցնում են պայքարի լարվածությամբ, անկանխատեսելիությամբ:

Ի վերջո, Հայաստանի պատվիրակությունը թիմային ընդհանուր հաշվարկում գրավեց 42-րդ տեղը, լավագույն արդյունքն այն ժամանակներից ի վեր, ինչ Հայաստանը հանդես է գալիս առանձին հավաքականով: Համեմատության համար նշենք, որ նախորդ օլիմպիադայում (Լոնդոն 2012) հայ մարզիկները 3 մեդալ էին նվաճել (մեկ արծաթ, երկու բրոնզ)՝ կիսելով 60-62-րդ տեղերը:

«Ռիո-2016»-ում պատվիրակ ունեցավ Կապանը: Եռացատկորդ Լեւոն Աղասյանն իր հնարավորություններից ցածր հանդես եկավ՝ ձախողելով երեք ցատկերից երկուսը, իսկ միակ հաջող փորձով ցույց տվեց 15մ 54սմ արդյունք: Նշենք, որ Հայաստանի առաջնությունում կարողացել էր ցատկել 16,85 մետր: Սփոփվենք նրանով, որ Լեւոնը տակավին երիտասարդ է, եւ նրա օլիմպիական ցատկերն առջեւում են:

Ինչեւէ, «Ռիո-2016»-ին մասնակցեց ռեկորդային 205 երկրի ավելի քան 10 հազար 500 մարզիկ: Այս օլիմպիադայում հայկական պատվիրակությունը եւս հանդես եկավ ավելի քան ներկայացուցչական կազմով՝ 33 մարզիկ: Եվ արդյունքներն ակներեւ են: Իսկ հաջորդ օլիմպիադան կկայանա չորս տարի հետո՝ Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Միհրան Հարությունյան

Արթուր Ալեքսանյան

Գոռ Մինասյան

Սիմոն Մարտիրոսյան

Հ.Գ. *Մխիթարը գիտի, որ շատ եմ սիրում գյուղի արեւմտյան սարալանջի փշատերեւ արհեստական անտառը: Ինքն էլ անտարբեր չէ մարդու ձեռքով ստեղծված այդ հրաշալիքի նկատմամբ: Վաղուց էր խոստացել անտառակում ինձ անակնկալ մատուցել: Մեքենայով շրջանցում ենք անտառի հիմնական զանգվածը եւ հայտնվում բլրի գագաթի մոտ՝ բացատում: Էլ ճանապարհ չկա, պետք է ոտքով գնանք: Իջնում ենք մեքենայից: Փշատերեւն այստեղ ավարտվում է, բայց անտառը՝ շարունակվում. վայրի տանձենիների շարքերն աստիճանավանդակների նման բարձրանում են սարն ի վեր: Երիտասարդ ծառերի ճյուղերը պտղի առատությունից եւ ծանրությունից արդեն ճկվել են: Այստեղ շատ են նաեւ այս անտառի մշտական ուղեկիցները՝ շեկլիկ պղպեղասունկ, ցլասունկ, յուղասունկ սնկատեսակները: Սնկի գիտակներին ակնարկս հավանաբար ինչ-որ բան ասում է: Բայց անակնկալը ոչ «քոլի» տանձն է, ոչ էլ սունկը, այլ այն, որ փշատերեւ անտառն սկսել է վերարտադրել իրեն: Դա իրոք որ անակնկալ է: Նա ինձ ցույց է տալիս տանձենու շարքերի միջեւ այս ու այն տեղ մարդու գոտկատեղիին հասնող սոճու առողջ մատղաշ ծառերն ու հետո էլ բացատրում՝ մեր կլիմայական պայմաններում փշատերեւի վերարտադրությունը հազվագյուտ երեւույթ է: Գիտնական-գյուղատնտեսին դա ավելի տեսանելի է…*

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ժամանակակից տեխնոլոգիաներն՝ ի նպաստ Կապանի հանքագործների

î Ý ï »ëáõÃÛáõÝ

Ժամանակակից հանքա-մետալուրգիական արդյունաբերությունը հանդիսանում է տնտեսության առավել բարձր տեխնոլոգիական ոլորտներից մեկը: Բաց եւ ստորգետնյա հանքավայրերում շահագործվում է ժամանակակից տեխնիկա, գործարաններում կիրառվում են եզակի տեխնոլոգիաներ, իսկ աշխատանքների ընթացքը վերահսկում են խելացի համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս արտադրական բոլոր գործընթացները կառավարել արդյունավետ եւ անվտանգ կերպով:

Բարեհաջող զարգացման եւ արդյունավետ աշխատանքի համար «Պոլիմետալում» կիրառում են ժամանակակից տեխնոլոգիաներ եւ հատուկ ծրագրային ապահովում՝ Datamine: Datamine ծրագիրը համարվում է աշխարհում առաջադեմ ծրագրային փաթեթ, որը հնարավորություն է տալիս 1400 հանքարդյունաբերական ընկերություններին ընդունել օպերատիվ որոշումներ եւ մշակել ռազմավարական պլաններ: Ծրագիրը թույլ է տալիս գծագրել բազմաթիվ մակարդակներից բաղկացած երկրաբանական գրաֆիկներ, կատարել երկրաբանական կտրվածքներ եւ հորիզոնային պլաններ ու դրանց հետ կապակցել տվյալների բազան, իսկ այնուհետեւ օգտագործել տվյալների այդ բազան՝ եռաչափ մոդելներ պատրաստելու համար, հաշվարկել պաշարները՝ ըստ հանքաքարի նախատեսված դասերի եւ տեսակների, նախագծել ստորգետնյա ու բաց հանքավայրերն եւ, ի վերջո, կատարել ֆինանսա-տնտեսական հաշվարկները, որոնք վերաբերում են կոնկրետ հանքավայրի շահագործման ողջ ժամանակահատվածին:

Հունիս-հուլիս ամիսներին Սանկտ Պետերբուրգում տեղակայված «Պոլիմետալի» լեռնային տեղեկատվական տեխնոլոգիաների կորպորատիվ կենտրոնում Կապանի ԼՀԿ-ի երկրաբանները եւ արտադրության ու պլանավորման գծով մասնագետներն անցել են Datamine ծրագրային ապահովման փաթեթի օգտագործման ուսուցման կուրսեր: Հանքագործներին ծրագրային գիտելիքներն անհրաժեշտ են հանքարդյունաբերական գործընթացի արդյունավետ կառավարման համար, որը պահանջում է տեղեկատվական համակարգերի նախագծման եւ պլանավորման հմտություններ, իսկ երկրաբանները ծրագրի միջոցով իրականացնում են հանքավայրերի մոդելավորում եւ պաշարների գնահատում:

> *Վերապատրաստման դասընթացները շարունակվեցին նաեւ օգոստոս ամսին: Ձեռնարկությունում մարկշեյդերների համար ուսուցման դասընթացներ վարեց «Պոլիմետալ» ընկերության լեռնային տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդական Աշոտ Հակոբյանը:*

«Կապանի ԼՀԿ-ն համարվում է «Պոլիմետալ» ընկերության մի մասը, իսկ «Պոլիմետալ» ընկերությունում արդեն 4 տարի է հանքարդյունաբերական աշխատանքների իրականացման համար հաջողությամբ կիրառվում է Datamine ծրագրային ապահովման փաթեթը», – մեկնաբանում է Աշոտ Հակոբյանը: Մասնագետի խոսքով՝ «Datamine» աշխարհատեղեկատվական համակարգի կիրառումը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով փոփոխություններ կատարել եւ գրաֆիկական նյութերի բազան հավելել դաշտային աշխատանքների տվյալներով, նախագծել եւ պլանավորել լեռնային աշխատանքները, ապահովել գրաֆիկների մատչելիությունն եւ տեղեկատվությունը, արագ կերպով իրականացնել պաշարների հաշվարկը տարբեր մեթոդների միջոցով, ապահովել տեղեկատվության պահպանումը եւ դրա արագ որոնումը:

«Նախկինում մենք օգտագործել ենք «Սուրպակ» եւ «Ձեմկոմ» ծրագրերը, – նշում է Կապանի ԼՀԿ-ի հանքային աշխատանքների գծով գլխավոր ինժեների տեղակալ Արթուր Ալավերդյանը: – *Նոր ծրագրային ապահովմանն անցնելը մեզ համար դժվարություն չի ներկայացնում: Անհրաժեշտ է միայն ցանկություն, ինչը մեր աշխատակիցներն ունեն: Ուսուցման գործընթացը հաջող է ընթանում, աշխատակիցները հեշտությամբ են ընկալում նյութը: Դա նաեւ խոսում է դասընթացավարի հմտության մասին»:*

Դասընթացի մասնակիցներն արդեն բարձր են գնահատել նոր ծրագրային ապահովումը:

«Շնորհիվ ուսուցման դասընթացի՝ մենք ծանոթացել ենք Datamine ծրագրին, հասկացել ենք դրա առավելությունները եւ նրբությունները, – ասում է Կապանի ԼՀԿ-ի տվյալների բազայի երկրաբան Մարի Մինասյանը, – **Datamine ծրագիրն, ի տարբերություն այլ ծրագրերի, որոնք մենք կիրառել ենք նախկինում, աշխատաժամանակի ծախսման տեսանկյունից համարվում է պարզ եւ արդյունավետ»:**

Այն գիտելիքները, որոնք «Պոլիմետալը» տալիս է իր աշխատակիցներին, համապատասխանում են համաշխարհային չափանիշներին: Ընկերության կողմից ստեղծված դպրոցի եզակիության եւ պահանջարկի մասին խոսում է այն փաստը, որ LSSկ-ում սովորելու համար հերթ է գոյացել, այդ թվում նաեւ մրցակից ընկերություններից: Կենտրոնում Datamine ծրագրի տեխնոլոգիաների ուսուցման դասընթաց են անցել նաեւ Ռուսաստանի եւ ԱՊՀ երկրների հանքարդյունաբերական հզոր ընկերությունների մասնագետները՝ «Կազցինկա», «ԱԼՌՈՍԸ», «Պոլյուս», «Գիպրոնիկելյա»:

Լեռնային տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի մասին

Լեռնային տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը ստեղծվել է 2011թ. «Պոլիմետալ» ընկերությունում՝ Datamine ծրագրի շրջանակներում հանքային պլանավորումն ընկերությունում ներդնելու համար: Կենտրոնի կողմից առաջարկվող փաթեթում առկա են ավելի քան 30 ուսումնական կուրսեր հանքարդյունաբերության ոլորտի մասնագետների համար:

Ուսուցում «Պոլիմետալ» ընկերությունում

Աշխատակիցների հմտությունների զարգացումը համարվում է «Պոլիմետալի» առանցքային առաջնահերթություններից: Հիմնական սկզբունքը հանդիսանում է ուսուցումը՝ հիմնված իրական արտադրության վրա, երբ տեսական գիտելիքներն ամրապնդվում են գործնական մասով:

Ընկերության ձեռնարկությունների աշխատակիցները տարածաշրջանային ուսումնական կենտրոններում կարող են ստանալ իրենց մասնագիտություններին կից մասնագիտություններ, որտեղ հաշվի են առնվում արտադրական բոլոր պահանջները, ինչպես նաեւ բարձրացնել իրենց որակավորումը Սանկտ Պետերբուրգում տեղակայված կառավարող ընկերության լեռնային տեղեկատվական տեխնոլոգիաների կորպորատիվ կենտրոնում:

«Պոլիմետալի» աշխատակիցները մշտապես բարձրացնում են իրենց մասնագիտական որակավորումը՝ հաճախելով տարբեր մասնագիտացված սեմինարների, կուրսերի եւ վերապատրաստման դասընթացների, ինչպես նաեւ հեռահար ուսուցման կորպորատիվ համակարգի միջոցով:

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ մամուլի ծառայություն

ՀՈՎԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. «Ոսկե մեդալակիրների թվով հանրապետությունում Սյունիքի մարզն առաջատար է»

էջ 3

ջարկն իսկապես հանրապետությունում կա: Մեկ այլ կողմից էլ նայելով հարցին՝ պետք է արձանագրենք, որ այդ թիվը մարզում կրթության որակի բարձր մակարդակը հավաստող ցուցանիշներից է:

– Գալիք ուստարում մարզում փակվող դպրոցներ կա՞ն:

– 2016-17 ուստարում փակվող դպրոցներ չկան, բայց կան դպրոցներ, որտեղ հաճախում է 3 կամ 4 երեխա: Ցավալիորեն արձանագրենք, որ գյուղական մի շարք դպրոցներում առաջին դասարան հաճախող երեխաներ չկան այս ուստարում: Փոխարենը Սիսիանի եւ Գորիսի գիշերօթիկ դպրոցները, Կապանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնը վերակազմակերպվելով կդառնան գնահատման եւ աջակցման կենտրոններ:

– Հիմնականում ո՞ր առարկաների ուսուցիչների թափուր տեղեր կան:

– Ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես մարզում մաթեմատիկա, աշխարհագրություն, ինֆորմատիկա, ֆիզիկա առարկաների ուսուցիչների խիստ կարիք կա:

– 2016-17 ուստարվանից մարզի բոլոր դպրոցներն անցնում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համընդհանուր կրթական համակարգին: Արդյո՞ք պատրաստ են դրան մարզի դպրոցները:

– Հանրապետությունում առաջին անգամ 2016-17 ուստարվանից մարզի բոլոր դպրոցները կիրականացնեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համընդհանուր կրթություն: Իհարկե, գործընթացը լի է բազում խոչընդոտներով, բայց մեր դպրոցների տնօրենները եւ ուսուցիչներն անցել են համապատասխան վերապատրաստման դասընթացներ եւ, համոզված եմ, բավականին կարճ ժամանակահատվածում շատ դժվարություններ կհաղթահարվեն: Հաշվի առնելով տարբեր դասընթացների, սեմինարների եւ ժողովների ժամանակ մեր ուսուցիչների ու տնօրենների ակտիվությունը, տեղեկացվածությունը, ինչ-որ առումով նաեւ որոշակի փորձը՝ որոշեցին մեր մարզում առաջինը ներառել կրթական այդ համակարգը: Ուսուցիչները շատ չեն դժգոհում, նրանց մտահոգում է նաեւ իրենց վարձավճարը, որն այս դեպքում նախորդից պետք է տարբերվի: Դժվարություններից մեկն էլ նախադեպը չունենալն է, եւ այդ առումով պատասխանատվությունը մեծ է, քանի որ հետագայում մեր փորձն այլ դպրոցների համար կդառնա ուղղորդող: Ուսուցման կազմակերպման համար դպրոցում կլինի նաեւ ուսուցչի օգնականի հաստիք. չափազանց կարեւոր է աջակցման կենտրոնների դերը: Լուրջ խնդիրներից է երեխաների կրթության առանձնահատուկ կարիքների գնահատման համար ծնողների համաձայնությունը, որը պարտադիր է:

– Նոր ուստարվա նախօրեին կարո՞ղ եք նշել հատկապես այն կարեւոր խնդիրները, որոնք ողջ տարվա ընթացքում կլինեն ձեր ուշադրության կենտրոնում:

– Ինչպես արդեն նշեցի, այս ուստարվա դժվարություններից է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համընդհանուր կրթության անցնելը, ինչի կայացման համար լուրջ աշխատանքներ պետք է իրականացնեն թե՛ կրթության վարչությունը, թե՛ դպրոցները: Հաջորդ կարեւոր խնդիրը նախորդ տարիներին ձեռք բերած հաջողությունները պահպանելն ու զարգացնելն է: Օրակարգային հարցերից է նաեւ որոշ դպրոցների, հատկապես Տոլորսի, Սպանդարյանի դպրոցների, ինչպես նաեւ Դաստակերտի դպրոցի տանիքի վերանորոգումը: Ուրախությամբ նշենք, որ Ագարակի միջնակարգ դպրոցի նոր մասնաշենքն արդեն պատրաստ է, ավարտվել է նաեւ Մեղրու թիվ 1 դպրոցի շինարարական աշխատանքների՝ այս տարվա համար նախատեսված փուլը: Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի նոր շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներն ընթացքի մեջ են. սեպտեմբերի 1-ին այդ դպրոցի աշակերտները կհաճախեն իրենց դպրոց, քանի դեռ չեն սկսվել շինարարական բուն աշխատանքները, ուսուցման գործընթացը կկազմակերպվի հին շենքում:

– Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրենի ընտրությունը մեծ աղմուկ է առաջացրել, եթե կարելի է՝ պարզաբանեք, թե իրականում ի՞նչ է կատարվել:

– Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրեն է ընտրվել Արթուր Մնացականյանը, բայց քանի որ մրցույթի անցկացումը բողոքարկվել է, նախարարությունում ստեղծվել է համապատասխան հանձնաժողով, որ զբաղվում է այդ խնդրի ուսումնասիրությամբ:

Նշեմ, որ այս ուստարում մարզի որոշ դպրոցներում տնօրենների փոփոխություններ են տեղի ունեցել. Օխտարի միջնակարգ դպրոցում տնօրեն է ընտրվել Վարդան Ստեփանյանը, Գորիսի թիվ 5 հիմնական դպրոցում՝ Արեւիկ Մաքունցը, Գորիսի թիվ 6 հիմնական դպրոցում՝ Աշոտ Գեւորգյանը, Խոզնավարի եւ Սյունիքի միջնակարգ դպրոցներում տնօրենի պաշտոնակատարներ են նշանակվել Վոլոդյա Զախարյանը եւ Լիլիթ Առաքելյանը:

– Նախորդ ուստարում նախատեսվում էր մարզում անցկացնել կրթության որակի ուսումնասիրման համար տեսչական ստուգումներ, որ ապրիլյան պատերազմի պատճառով հետաձգվեցին: Այս ուստարում կիրականացվի՞ նման ստուգում:

– Այս տարվա հոկտեմբերին նախատեսվում է մարզպետարանի կրթության վարչության ենթակայության 150 եւ ավելի աշակերտ ունեցող, ինչպես նաեւ որոշ գյուղական դպրոցներում՝ ընտրությամբ, անցկացնել տեսչական ստուգումներ, որ վերջին 20 տարում չէին իրականացվել: Նպատակը՝ ստուգել դպրոցների կրթական մակարդակը՝ հիմքում դնելով հայոց լեզու, մաթեմատիկա, ռուսաց լեզու եւ պատմություն առարկաների դրվածքը, այդ առարկաներից աշակերտների գիտելիքները եւ այլն:

– Ձեր խոսքը սեպտեմբերի 1-ի կապակցությամբ:

– Շնորհավորում եմ բոլորին նոր ուստարվա առթիվ, մաղթում հաջողություններ: Սեպտեմբերի 1-ն ինձ համար ծանր եւ պատասխանատու աշխատանքներ սկսելու մեկնարկն է ազդարարում եւ, համոզված եմ, բոլոր դպրոցներն էլ այդ օրը երեխաների համար տոն դարձնելու թեկուզ սահմանափակ միջոցներ ունեն. չէ՞ որ յուրաքանչյուր աշակերտ, նոր ուստարում դպրոց մտնելով, ակնկալում է նորություն տեսնել:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գործերով իմաստավորված ինը տասնամյակ

Լրացավ վաստակաշատ մանկավարժ, երկու գրքի հեղինակ, Արծվանիկի հնագիտական թանգարանի հիմնադիր Էդվարդ Մանուչարյանի ծննդյան 90-ամյակը: Ողջ գիտակցական կյանքը բնօրրանում է անցկացրել: Քաղաքային թոհուբոհից հեռու տասնամյակներ ի վեր զբաղվել է դեռահասների կրթության ու դաստիարակության գործով: Ինքը փաստը հետեւյալ կերպ է մեկնաբանում. «Աշխարհից կտրված, բայց խիղճներս հանգիստ էինք ապրում»: Կինը՝ Ամալյա Մովսիսյանը, վաստակաշատ մանկավարժ էր, երկրային կյանքին հրաժեշտ է տվել 2012 թվականին: Միասին երկու որդի, երեք դուստր են կրթել ու դաստիարակել:

Թերթենք հոբելյարի կյանքի էջերը: Ծննդավայրում միջնակարգ կրթություն ստանալուց հետո զորակոչվել է խորհրդային բանակ, դա 1945 թվականին էր, ծառայել Ջուլֆայում տեղակայված 89-րդ հրածգային գնդում, ամիսներ անց զորամասը տեղափոխվել է Սեւաստոպոլ, 76 մմ հրանոթի հաշվարկի հրածիգ էր, ծառայությունն այնուհետեւ շարունակել է Սեւծովյան նավատորմի առափնյա պաշտպանության զորամասում որպես հաշվարկի կրտսեր հրամանատար: Ջորացրվելուց հետո վերադարձել է ծննդավայր, եւ նրա հետագա գործունեությունը կապված է եղել մի ոլորտի՝ մանկավարժության հետ: Հայրենի գյուղի դպրոցում աշխատել է զինղեկ եւ ֆիզկուլտուրայի ուսուցիչ, հետո բարձրագույն կրթություն է ստացել Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Բուհն ավարտելուց հետո նշանակվել է Կաղնուտ գյուղի ութամյա դպրոցի տնօրեն, 1960-ից 1982-ը՝ հայրենի գյուղի միջնակարգ դպրոցի ուսմասվար, այնուհետեւ՝ տնօրեն մինչեւ 1988-ը, կենսաթոշակի անցնելուց հետո շարունակել է դասավանդել որպես պատմության ուսուցիչ մինչեւ 1995 թվականը:

Ինչո՞վ էր զբաղված վաստակած հանգստի անցնելուց հետո, կհարցնեք: Գրքեր էր գրում: Նրա հեղինակությամբ լույս է տեսել «Արծվանիկ (ճանաչիր քո գյուղը, նրա մարդկանց)» գիրքը, որ նվիրել է Հայրենական մեծ պատերազմում, Արցախյան գոյամարտում զոհված եւ տարբեր ժամանակներում բռնադատված արծվանիկցիների հիշատակին: Գրքում արտացոլված է գյուղի պատմությունը՝ վաղնջական ժամանակներից մինչեւ մեր օրերը, ընդարձակ անդրադարձ կա նշանավոր արծվանիկցիների գործունեությանը, ներկայացված են գյուղի երեւելի գերդաստանների տոհմածառերը: Գրքում ակնարկ կա Դավիթ Բեկի ազատագրական պայքարին արծվանիկցիների մասնակցության վերաբերյալ, նաեւ այն մասին, թե ինչպես Ռաֆֆին իջեւանել է Արծվանիկում, երբ «Դավիթ Բեկ» վեպի համար նյութեր էր հավաքում:

Իսկ 2015-ին՝ մեծ հաղթանակի 70-րդ տարում, իր միջոցներով լույս ընծայեց «Հերոսացած արծվանիկցիներ» գիրքը, որ նվիրված է Մեծ հայրենականում եւ Արցախյան պատերազմում մասնակից համագյուղացիներին: Դյուրին չէր նման գործ ձեռնարկելը, մանավանդ երկրորդ աշխարհամարտի համագյուղացի մասնակիցներն արդեն հրաժեշտ էին տվել երկրային կյանքին: Բայց հեղինակն իր հոգու պարտքն էր համարել սկսած գործն ավարտին հասցնել՝ հարգանքի տուրք մատուցելով երկրորդ աշխարհամարտում եւ Արցախյան գոյամարտում ընկածների հիշատակին, եւ գիրքն անվճար բաժանել համագյուղացիներին, ցանկացողներին, նախեւառաջ զոհված զինվորների ընտանիքներին:

Գրքի վերջաբանում հեղինակը ցավով է գրում, որ իր հայրենի Արծվանիկի բնակչությունը տարեցտարի նվազում է, ինչի վրա հրավիրում է հանրապետության եւ մարզային իշխանությունների ուշադրությունը:

Եվ սա դեռ ամենը չէ: Տակավին 1960 թվականից ի վեր նա ժողովել է հնագիտական արժեք ներկայացնող ցուցանմուշներ, կենցաղային իրեր, աշխատանքային գործիքներ եւ հիմնադրել թանգարան՝ դրանք փրկելով անդառնալի կորստից: Թանգարանի գրառման մատյանում իրենց տպավորությունների մասին գրել են գրողներ, լրագրողներ, պատմաբաններ, արտասահմանցի հյուրեր: Նրանք հավուր պատշաճի գնահատել են նրա նվիրումը՝ մի հարկի տակ մեկտեղել պատմահնագիտական արժեքներ: Արվածի գնահատանքն է այն, որ թանգարանն այսուհետեւ կոչվելու է Էդուարդ Մանուչարյանի անվամբ: Ավելորդ է ասել, որ իր հեղինակած գրքերով եւ հիմնադրած թանգարանով Էդուարդ Մանուչարյանն Արծվանիկին վերադարձրեց նրա պատմական հիշողությունը: Առանց վերապահումի կարելի է ասել, որ «Արծվանիկ» եւ «Հերոսացած արծվանիկցիներ» գրքերը կարող են ծառայել որպես սկզբնաղբյուր:

…Օգոստոսի 12-ին ողջ գերդաստանն այստեղ էր հավաքվել: Տարբեր տեղերից Արծվանիկ են ժամանել տարեց թե մանուկ, մոտ ու հեռու ազգականներ: Հիշարժան այդ օրը գերդաստանի նահապետը շրջապատված է հարազատներով ու մտերիմներով, թոռներով ու ծոռներով: Այստեղ են նրա երբեմնի աշակերտները, գործընկերները, բոլորն էլ նրան «ընկեր Մանուչարյան»-ով են դիմում, հարազատվարի ողջագուրվում: Հայրական տան բակում՝ թթենիների հովանու տակ, սեղան էր գցված: Տեսնել էր պետք, թե որպիսի ջանասիրությամբ էին օջախի աղջիկներն այն ծանրաբեռնում համադամ խորտիկներով ու ուտեստներով: Հոբելյարի ձեռքի հեռախոսը չէր լռում, Ամերիկայի Միացյալ Նահանգներից ավագ որդին՝ Աշոտն է իր սրտի խոսքը փոխանցում, իսկ ահա ԱՄՆ-ում բնակվող դուստրը՝ Արեգնազանը, ամուսնու՝ հայ դատի վաշինգտոնյան գրասենյակի տնօրեն Արամ Համբարյանի, որդու եւ դստեր հետ ժամանել եւ սրտանց ուրախանում են հոր, պապի հոբելյանի առթիվ: Հպարտանալու շատ բան ունի Էդիկ Մանուչարյանը, որդիները մասնակցել են Արցախյան գոյամարտին, Արարատ որդին Կապանի առանձին մոտոհրաձգային բրիգադի հինգերորդ դեսանտագրոհային գումարտակի հրամանատարն էր, մարտական ծառայությունների համար արժանացել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի: Այժմ գնդապետի կոչումով աշխատում է պաշտպանության նախարարության օպերատիվ վարչությունում: Պարգեւատրվել է «Կապան» ոսկե հուշամեդալով: Խնջույքին մասնակցում էր իր մարտական ընկերներով, ովքեր բաժակ են բարձրացնում եւ շնորհավորում հոբելյարին: Իսկ սեղանապետն ընթերցեց գյուղի համայնքի ավագանու որոշումը, ըստ որի Էդուարդ Մանուչարյանին շնորհվել է Արծվանիկի պատվավոր քաղաքացու կոչում:

Բաժակ բարձրացնելով եւ բարեմաղթանքներ հնչեցնելով հոբելյարի հասցեին՝ հանդիսության մասնակիցները մի պարտավորություն ստանձնեցին՝ մանկավարժի 100-ամյակին հավաքվել նույն կազմով եւ ավելի ճոխ նշել հոբելյանը:

Վերջում երախտագիտության խոսք է ասում հոբելյարը, բոլորից գոհ ու շնորհակալ է, միայն ցավով է նշում, որ գյուղում իր հասակակից մարդ չի մնացել…

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Սերգեյ (Սերյոժա) Կարապետյան

89 տարեկան հասակում հանկարծամահ եղավ Կապանի կրթության, հասարակական եւ քաղաքական կյանքում ճանաչում գտած Սերգեյ Միսակի Կարապետյանը:

Ծնվել է 1927թ. Քաջարանում՝ ճանաչված մանկավարժ, տարածաշրջանում առաջին վաստակավոր ուսուցիչ Միսակ Կարապետյանի ընտանիքում: 1945թ. գերազանցությամբ ավարտելով Շրվենանցի միջնակարգ դպրոցը՝ նույն տարում ընդունվում է Երեւանի՝ այն ժամանակ Մոլոտովի անվան պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արեւելյան լեզուների ու գրականության (պարսկերենի) բաժինը: Եղել է մեծն Աճառյանի լավագույն սաներից, որից, որպես հուշ, պահել է իրեն նվիրված գրառումով բառարանը:

Ուսանողական տարիներին նա ընտանիք է կազմում՝ ամուսնանալով ազգությամբ հույն Մարիա Դմիտրեւնա Ֆեոդորիդիի հետ եւ իր փայլուն աշխատանքային կենսագրությունը կերտում տարածաշրջանի կրթության բնագավառում: Աշխատելով Շրվենանցի, Լենինանքերի, Հ.Ավետիսյանի անվան դպրոցներում որպես ուսմասվար, Ղափանի քաղժողկրթբաժնում որպես դպրոցական տեսուչ, Ս.Կարապետյանը տարածաշրջանում իր ուրույն տեղն է գտնում որպես անկրկնելի մանկավարժ: Քիչ չեն այն կապանցիները, ովքեր այսօր էլ հիշում են տաղանդավոր ուսուցիչներ Սերգեյ Միսակի Կարապետյանի եւ Մարիա Դմիտրեւնա Ֆեոդորիդիի անկրկնելի դասերը, դասեր, որով նրանք սերունդներին են փոխանցել ոչ միայն իրենց բացառիկ գիտելիքները, այլ նաեւ սերմանել մարդկային բարձր արժեքներ՝ հանդիսանալով որպես մտավորականության օրինակելի մարմնավորում՝ իրենց անունն ու ավանդը թողնելով սերունդների հիշողության մեջ:

1958-68թթ. Սերգեյ Կարապետյանը վարել է շրջանային «Պղնձի համար» թերթի պատասխանատու քարտուղարի, ապա խմբագրի տեղակալի պաշտոնները:

17 տարի աշխատել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Ղափանի շրջկոմին առընթեր կուսհանձնաժողովի նախագահ:

Մի քանի անգամ ընտրվել է Ղափանի քաղխորհրդի դեպուտատ: Եղել է «Գիտելիք» ընկերության դասախոսական խմբի անդամ: «Правда» թերթի 60-ամյակի կապակցությամբ պարգեւատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով:

Նա միշտ էլ առանձնանում էր կապանյան մտավորականության շրջանում՝ լինելով ոչ միայն հայ, այլ նաեւ համաշխարհային գրականության փայլուն գիտակ:

Արդեն իսկ ուսանողական տարիներին էր ստեղծագործում. այդ տարիներին Հայկական ռադիոյի սփյուռքի համար հաղորդումների խմբագրության արտահաստիքային թղթակից էր, իսկ նրա դիպլոմային աշխատանքը՝ նվիրված տաջիկ անվանի գրող Սադեռտինի Այնիին ու Ստալինյան մրցանակի արժանացած նրա «Յոդդոշտոհո» վեպին, համառոտ տպագրվել է «Գրական թերթում»: Իր կյանքի ողջ ընթացքում շարունակում էր ստեղծագործել՝ գրելով էտյուդներ, ռեպորտաժներ, ակնարկներ, պատմվածքներ, բանաստեղծություններ, ֆելիետոններ, անելով թարգմանություններ: «Սովետական մանկավարժ», «Հայոց լեզու եւ գրականություն» հանդեսներում տպագրվել են լեզվի ու գրականության վերաբերյալ նրա հոդվածները: Նաեւ Հայկական խորհրդային հանրագիտարանի «Ղափան» հոդվածի հեղինակն է: Ղափանի շրջանի ու Ղափանի Ալ.Շիրվանզադեի անվան թատրոնի վերաբերյալ նրա հրապարակումներում եւ թատերախոսություններում կապանցիները կարող են գտնել հայրենի քաղաքի տարեգրությունը:

Ս.Կարապետյանը ճանաչել, շփվել եւ Կապան քաղաքի մտավորականությանն է ներկայացրել գրողներ Սիլվա Կապուտիկյանին, Պարույր Սեւակին, Համո Սահյանին, Սերո Խանզադյանին, Սուրեն Այվազյանին, Գեւորգ Հայրյանին, Սերգեյ Ումառյանին եւ նրանց ստեղծագործական գործունեությունը:

Թոշակի է անցել 1991 թվականին:

Որտեղ էլ որ աշխատել է, ձգտել է օգնել, պաշտպանել շարքային աշխատողի, բանվորի, գյուղացու շահերը:

Երեք զավակների հայր էր, 7 թոռան եւ 6 ծոռան պապ:

Իրեն բնութագրելով, Սերգեյ Միսակի Կարապետյանը գրել է այսպես.

> *«դավանափոխ չեմ եղել, մնացել եմ որպես աթեիստ, ինտերնացիոնալիստ, երդվյալ կոմունիստ»:*

Մի խումբ ընկերներ

«Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմն իր ափսոսանքն է հայտնում Սերգեյ Կարապետյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում նրա հարազատներին ու մերձավորներին:

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2016 թվականի հեռակա ուսուցման մասնագիտությունների, ընդունելության քննությունների եւ տեղերի ցանկ

Մասնագիտություններ	Ընդունելության քննությունները				Ընդ. տեղերի թիվը	Ուսման վարձը
	Մրցութային			Ոչ մրցութային		
Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*	15	200 000
Քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*	10	200 000
Պատմություն	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)կամ ԸՊ(գ)		Հլգ(գ)*	25	270 000
Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)		30	380 000
Հայոց լեզու եւ գրականություն	Հլգ(ք)	Հլգ(գ)			25	220 000
Տարրական մանկավարժություն եւ մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**			30	240 000
Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ(գ)		30	280 000
էլեկտրաէներգետիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*	30	210 000
Ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*	15	200 000

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 25-ը:

Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝

1. միջնակարգ կրթության ատեստատը, միջին մասնագիտական եւ մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը),
2. 6 լուսանկար (3x4 սմ չափսի),
3. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական),
4. զինվորական գրքույկ եւ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին,
5. արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաեւ զինծառայող ծնողի զոհվելու մասին, առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին),
6. միջազգային եւ հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները,
7. 2016թ. ավարտական միասնական քննությունների վկայագիր,
8. փաստաթղթերի ընդունման, ծեւակերպման համար 1500 դրամ եւ յուրաքանչյուր քննության համար 1500 դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը (արտոնություններից օգտվող դիմորդները ազատվում են ընդունելության քննությունների վճարից):

Դիմորդներն իրենց ցանկությամբ կարող են հայտագրել եւ մասնակցել միայն մեկ մասնագիտության ուսուցման մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտության համար սահմանված քննությունները:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098196712, 094449866:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հայտարարում է հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ընդունելություն՝ հետեւյալ մասնագիտությունների գծով.

Մասնագիտություն	Ընդունելության քննություններ			
	Մրցութային			Ոչ մրցութային
W Ագրոնոմիա, սելեկցիա եւ գենետիկա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ) ** կամ Ք(գ) **		Հլգ(գ)*
W Գյուղատնտ. կենդանիների սելեկցիա, գենետիկա եւ կենսատեխնոլոգիա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ) ** կամ Ք(գ) **		Հլգ(գ)*
W Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ) ** կամ Ք(գ) **		Հլգ(գ)*
W Կաթի եւ կաթնամթերքի, մանկական եւ ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա	Մ(գ)	Ք(գ) ** կամ Ֆ(գ) **		Հլգ(գ)*
Հողաշինարարություն, հողային կադաստր	Մ(գ)	Ֆ(գ) **		Հլգ(գ)*
Ագրոէկոնոմիկա եւ սննդարդյունաբերության էկոնոմիկա	Մ(գ)	Օտ(գ)**		Հլգ(գ)*
Հաշվապահական հաշվառում եւ հարկում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտ(գ)	

* նշված ոչ մրցութային առարկայի քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

** նշված առարկաներից քննություն հանձնողները մրցույթով ընդունվում են առաջին հերթին:

W նշված մասնագիտությունների գծով դիմորդները կարող են ընդունվել առանց ընդունելության քննությունների:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2016թ.-ի հոկտեմբերի 1-ը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի ուսումնական մասնաշենքում:

Հասցեն՝ ք. Սիսիան, Շիրվանզադե 7:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել /0283/ 2-37-04, /094/ 32-36-71 հեռախոսահամարներով:

Ð²Ú î²ð²ðàôÂÚàôÜ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Իշխանասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (12.25 դասաժամ), եւ ֆիզիկայի (0.5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ սեպտեմբերի 23-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա Սյունիքի մարզի Իշխանասարի հիմնական դպրոցում, 2016թ. սեպտեմբերի 27-ին: Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-04-33-01հեռախոսահամարով:

Ð²Ú î²ð²ðàôÂÚàôÜ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Դավիթբեկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (15 դասաժամ), պատմության (12 դասաժամ), ռուսաց լեզվի (8 դասաժամ) ուսուցչի եւ դասվարի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար հանձնաժողովին է ներկայացվում

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը,որին հավակնում է (ձեւ 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ սեպտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 27-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Դավիթբեկի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 6 10 30, (093) 17 77 01 հեռախոսահամարներով:

Ð²Ú î²ð²ðàôÂÚàôÜ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Նռնաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (11 դասաժամ), անգլերենի (7 դասաժամ), մաթեմատիկայի (15.75 դասաժամ) քիմիայի, կենսաբանության (11.75 դասաժամ), պատմության, աշխարհագրության (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար հանձնաժողովին է ներկայացվում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը,որին հավակնում է (ձեւ 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ սեպտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 27-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Նռնաձորի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 10 58 18 հեռախոսահամարով:

ì²Ö²è ìàôØ¾ 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազիֆիկացված է:
Զանգահարել՝ (094) 95 55 35:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 24.07.2016թ.: